

Է. Գ. ՄԱԼԻԱՍՏԱՆ.

ԵՐԿՐՈԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԻՄՊՈԶԻՈՒՄԸ

1964 թ. Դեկտյում (Հնդկաստան) կայացած երկրաբանական Միջազգային 22-րդ կոնֆրեսում խնդիր է դրվում ստեղծել երկրաբանական գիտությունների պատմության Միջազգային կոմիտե: Կոնֆրեսը Սովետական Միության երկրաբանների ազգային կոմիտեին հանձնարում է նշված կոմիտեի ստեղծման հետ կապված աշխատանքները, ղեկավարության ընտրությունը և «Երազրին մշակումը կատարել ՍՍՀՄ-ում: Իր հերթին Սովետական Միության երկրաբանների Ազգային կոմիտեն որոշում է այդ միջոցառումը անցկացնել Հայաստանում: Հարց է առաջանում: Երկրաբանության պատմության բնագավառի գիտնականների այդ բարձրագույն ֆորումը ինչո՞ւ է տեղի ունենալ Հայաստանում:

Հայկական լեռնաշխարհը իր երկրաբանական կառուցվածքով համարվում է աշխարհի ամենահետաքրքիր և բարդ շրջաններից մեկը, ուր կարելի է հանդիպել երկրաբանության պատմության բոլոր դարաշրջաններում գոյացած ապարներին՝ սկսած ամենահին ու հնագույն ժամանակներից, մինչև մեր ժամանակները:

Բարդ երկրաբանական կառուցվածքով է բացատրվում նաև Հայկական լեռնաշխարհի բազմազան և հարուստ օգտակար հանածոների առկայությունը: Ինչպես հայտնի է, իր ընդերքի գանձերով Հայաստանը մեր մոլորակի ամենահարուստ անկյուններից մեկն է, որի բնական գանձերն օգտագործվել են դեռ անհիշելի ժամանակներից: Հայկական լեռնաշխարհը մարդկության պատմության դեռ վաղ շրջաններում եղել է բարձր մշակութիւն երկիր, նա եղել է քարի և բրոնզի դարի հայրենիք, հայերի նախնիները հանդիսացել են աշխարհի առաջավոր այն ցեղերից մեկը, որոնք օգտագործել են երկաթը և հիմք դրել երկաթի դարին: Գիտնականները գտնում են, որ Հայկական լեռնաշխարհը հանդիսանում է

«երկաթի դարի էպիկենտրոն»։ Հայկական լեռնաշխարհը եղել է նաև ոսկու, կապարի և այլ մետաղների արտադրության և մշակման օջախներից մեկը։

Մեր լեռնաշխարհի նյութական կուլտուրայի խորը պատմությունը և մեր նախնիների բարձր մշակույթը առիթ հանդիսացան, որ երկրաբանության պատմության Միջազգային սիմպոզիումը և առաջին Սահմանադիր ժողովը կայանա քաղաքակրթության հին օրրաններից մեկում՝ Երևանում։

1967 թ. հունիսի 6—12 Երևան քաղաքում տեղի ունեցավ կոմիտեի ստեղծման հետ կապված առաջին սահմանադիր ժողովը։ Միաժամանակ, նկատի ունենալով, որ Երևանը հանդիսանում է համաշխարհային քաղաքակրթության հնագույն օջախներից մեկը, այդ նույն ժամանակամիջոցում անցկացվեց երկրաբանության պատմության Միջազգային սիմպոզիում։

Սահմանադիր ժողովի և Միջազգային սիմպոզիումի աշխատանքներին մասնակցում էին 15 երկրների 150 ներկայացուցիչ, որոնք ներկայացնում էին ՍՍՀՄ-ը, ԱՄՆ-ը, Անգլիան, Ֆրանսիան, ԳԴՀ-ը, ԳՅՀ-ը, Լեհաստանը, Զեխուսլովակիան, Ճապոնիան, Իսպանիան, Նոր Զելանդիան, Թեղիան, Դանիան, Շվեդիան և Հոլանդիան։

Ժողովում բացման խոսքով հանդես եկավ Երկրաբանության պատմության միջազգային կոմիտեի կողմից լիազորված պրոֆ. Ի. Ի. Գորսկին։ Ժողովի և սիմպոզիումի մասնակիցներին շերմորեն ողջոնեցին Հայկ. ՍՍՀ ԳԱ պրեզիդիոնու, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը, Երկրաբանների միջազգային միության գլուխավոր քարտուղար, պրոֆ. Վ. Վան-Լեկվիկը և Բնագիտության ու տեխնիկայի պատմաբանների միության սովորական ազգային կոմիտեի նախագահի տեղակալ պրոֆ. Ա. Ս. Ֆելքորովը։

Սահմանադիր ժողովը միաձայն ընդունեց աշխատանքի «Երագիր», որի հիմնական նպատակն էր օգնել տարբեր երկրներում երկրաբանության պատմության գծով կատարվող աշխատանքներին, նպաստել երկրի զարգացման պատմությանը նվիրված ուղղությունների զարգացմանը և միջազգային համագործակցության հանապարհով կազմել և հրատարակել «Երկրաբանության համաշխարհային պատմության» բազմահատորյակը։

Ժողովը ընտրեց կոմիտեի նախագահություն։ Նոր ստեղծված միջազգային կազմակերպության պրեզիդիոնու ընտրվեց պրոֆ. Վ. Վ. Տիխոնմիրովը (ՍՍՀՄ), վիցե-պրեզիդիոնտներ՝ պրոֆ. Ռ. Հոյ-

կասը (Հոլանդիա), պրոֆ. Զ. Ուայտը (ԱՄՆ), պրոֆ. Բ. Ռոյը (Հնդկաստան), որոնք համապատասխանաբար ներկայացնում են Եվրոպան, Հյուսիսային Ամերիկան և Ասիան (Հարավային Ամերիկայի տեղը մնում է թափուր): Կոմիտեի գլխավոր քարտուղար ընտրվեց լեհ գիտնական Կ. Մաշլանկիլը, իսկ անդամներ՝ պրոֆ. Կորժանը (Զեխոսլովակիա), պրոֆ. Ազկոնան (Իսպանիա), պրոֆ. Ալլսը (Մեծ Բրիտանիա), պրոֆ. Վալլանսը (Ավստրալիա), պրոֆ. Կորայասին (Ճապոնիա) և պրոֆ. Ռեգնելը (Շվեյցարիա):

Սահմանադիր ժողովի նիստերը փակ էին, նրա աշխատանքներին, որպես կազմակերպիչ երկիր, Հայաստանից մասնակցում էին՝ Հայկ. ՍՍՀ ԳԱ վիցե-պրեզիդենտ Ս. Ս. Մկրտչյանը, Հայկ. ՍՍՀ բնագիտության և տեխնիկայի պատմության խորհրդի նախագահը, պրոֆ. Գ. Բ. Պետրոսյանը և Սահմանադիր ժողովի ու Միջազգային սիմպոզիումի կազմկոմիտեի գիտնական քարտուղար, դոցենտ է. Գ. Մալխասյանը:

Նորմատիվ Միջազգային կոմիտեն իր անդրանիկ նիստում որոշում ընդունեց կոմիտեի թղթակից-անդամների ընտրությունների և նրանց պարտականությունների մասին: Երկրաբանության պատմության Միջազգային կոմիտեի առաջին թղթակից-անդամներ ընտրվեցին տարբեր երկրների 20 ներկայացուցիչ, այդ թվում ՍՍՀՄ-ից 5-ը, որոնցից է. Գ. Մալխասյանը՝ Հայաստանից:

Սիմպոզիումի աշխատանքներին զեկուցումներով հանդես եկան 11 երկրների ներկայացուցիչներ: Զեկուցումները նվիրված էին երկրաբանության պատմության ամենատարբեր հարցերին՝ սկսած ընդհանուր տեսական հարցերից, վերջացրած առանձին երկրների երկրաբանության պատմությանը կամ նրա խոշորագույն դորձիչներին նվիրված զեկուցումներով:

Ունկնդիրների մոտ մեծ հետաքրքրություն առաջ բերեց պրոֆ. Վ. Վ. Տիխոմիրովի (ՍՍՀՄ) զեկուցումը՝ նվիրված երկրաբանության պատմության կարևորագույն ֆակտորներին, նրա զարգացման տարբեր փուլերում: Հետաքրքրությամբ լսվեցին նաև Ա. Ի. Ռավիկիլիչի (ՍՍՀՄ) (Կատաստրոֆիզմ, ունիֆորմիզմ և էվոլյուցիոնիզմ), Զ. Ուայտի (ԱՄՆ) «Ամերիկայի երկրաբանության պատմությունը նրա վաղ փուլում», Ռ. Մարտինսի (ԳՖՀ) «19-րդ դարում Եվրոպայի ռելիեֆի ձևերի մաթեմատիկական հաշվարկումների մասին», Խ. Ազկոնայի (Իսպանիա) «Իսպանիայի երկրաբանությունը XVIII և XIX դարերում» զեկուցումները, ինչպես նաև Ա. Կայեի (Ֆրանսիա) և Ն. Սպելդնեսի (Դանիա) զեկուցումները՝ նվիրված

Հնագիտական պեղումների ժամանակ բարի դերի նշանակության մասին և այլն։ Հայ հասարակության մեջ հետաքրքրություն առաջացրեց լեհ գիտնական Ս. Զարնեցկու զեկուցումը՝ նվիրված հայ ականավոր գիտնական, Կրակովի համալսարանի հանքաբանության ամբիոնի հիմնադիր, պրոֆ. Յան Յաշկևիչը (Հակոբ Հակոբյան) կանքին և գործունեությանը։

Հայ գիտնականները գիտական այդ մեծ փորումին ներկայացրել էին զեկուցումներ՝ նվիրված Հայաստանի օգտակար հանածոների օգտագործման պատմությանը հնից մինչև միջին դարերը և երկրաբանական մտքի զարգացման պատմությանը՝ սկսած Անտիկա Շիրակացուց (VII դար) մինչև մեր օրերը։

Ս. Ս. Մկրտչյանը, Կ. Ն. Պաֆենհոլցը և է. Գ. Մալխասյանը իրենց համատեղ զեկուցման մեջ հանգամանութեն կանգ առան Հայաստանում երկրաբանության զարգացման հիմնական փուլերի վրա։ Հետաքրքրությամբ լսվեցին Ա. Գ. Աբրահամյանի և Գ. Բ. Պետրոսյանի զեկուցումը, նվիրված Անանիա Շիրակացու՝ երկրագնդի ձեր և կառուցվածքի մասին հայացքներին, Ա. Տ. Ասլանյանի և Ս. Ա. Սարդարյանի՝ «Քարի մշակույթը Հայաստանում անտրոպոգենի ժամանակ», Բ. Ն. Առաքելյանի՝ «Քարի նշանակությունը հին և միջին դարերի Հայաստանի տնտեսությունում», Կ. Հ. Մկրտչյանի և է. Վ. Խանջանյանի՝ «Հին դարերում Հայաստանի լեռնային գործը» և այլ զեկուցումները։ Թուն հետաքրքրություն առաջացրեց Ս. Տիգրանյանի զեկուցումը՝ նվիրված հայ երկրաբան լ. Սակենդիարովի անունը կրող միակ բարձր մրցանակի մասին, որը շնորհվում է յուրաքանչյուր կոնգրեսի ժամանակ, այն երկրի լավագույն երկրաբանին, որտեղ տեղի է ունենում կոնգրեսը։

Հին և միջին դարերում հայ գիտական մտքին նվիրված հետաքրքրի զեկուցումներով հանդես եկան նաև Ս. Երեմյանը, Ա. Ա. Ասլանյանը և Ա. Բ. Բաղդասարյանը։

Փետք է նշել, որ հայ գիտնականների բոլոր զեկուցումները մեծ հետաքրքրություն առաջացրին սովորական և արտասահմանյան գիտնականների մոտ։

Սիմպոզիումի աշխատանքներին մասնակցում էին պատմաբաններ, հնագետներ, փիլիսոփաներ, աշխարհագետներ, մետաղգործներ և այլ մասնագիտությունների տեր մարդիկ։

Սահմանադիր ժողովի և սիմպոզիումի աշխատանքների ավարտվելուց հետո, նրա մասնակիցները 4 օր ծանոթացան Հայաստանի պատմական և տեսարժան վայրերին, եղան Մեծամորում,

լճաշենում, էջմիածնում, Զվարթնոցում, Գառնիում, Գեղարդում,
Սևանում, Բյուրականի աստղադիտարանում և այլուր: Այցելեցին
մայրաքաղաքի մի շարք գիտական և պատմա-հասարակական
օջախներ:

Երևանյան սիմպոզիումը նոր էջ կրացի երկրի նյութական
մշակույթի զարգացման պատմության մեջ¹:

1 Երկրաբանության պատմության հաջորդ միջազգային սիմպոզիումը տեղի ունեցավ 1970 թ. ԳԴՀ Ֆրեյբերգ քաղաքում: Այն նվիրված էր հանքային գործի և հանքավայրերի զարգացման պատմությանը: